1.Հաստատել «Մեծամորի վերելք» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետով հաստատված կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

Համայնքի ղեկավար՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված 1
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ավագանու 2024 թվականի
հոկտեմբերի 18 -ի N 168-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԵԾԱՄՈՐԻ ՎԵՐԵԼՔ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Մեծամորի Վերելք» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետև՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի նպատակն է թատերարվեստի բնագավառում մշակութային գործունեության իրականացումը:

2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

3. Կազմակերպության հիմնադիրն է Մեծամոր համայնքը՝ ի դեմս Մեծամորի համայնքի ավագանու:

4. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

6. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

7. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ դրոշմակնիք, ձևաթղթեր և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ անհատականացման միջոցներ:

8. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ, եկամուտների և ծախսերի նախահաշիվ:

9. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել հանրապետական և օտարերկրյա մշակութային և թատերական կազմակերպությունների և հաստատությունների հետ:

10. Կազմակերպության անվանումն է՝
լրիվ - «Մեծամոր համայնքի Վերելք դրամատիկական թատրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, կրճատ՝ «Մեծամորի Վերելք» ՀՈԱԿ:

11. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք գ. Նորապատ 5փ.11շ.:

12. Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

13. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակն է՝

1) թատերարվեստի բնագավառում մշակութային գործունեության իրականացում,

2) թատերարվեստի բնագավառում, հանդիսատեսի հոգևոր պահանջների ձևավորում և բավարարում,

3) ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանում և զարգացում,

4) դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում:

14. Հիմնադրի համաձայնությամբ, կազմակերպությունն իր գործունեության նպատակներն իրականացնելու համար՝

1) ընտրում է իր գործունեության գեղարվեստական և ստեղծագործական ուղղվածությունը, խաղացանկը, ընդունում որոշումներ՝ ներկայացման հրապարակային ցուցադրման, գովազդային նյութերի հրապարակման վերաբերյալ,

2) ձևավորում է ստեղծագործական և տեխնիկական անձնակազմը,

3) ծրագրում է իր հիմնական գործունեությունը և նկատի առնելով կնքված պայմանագրերն ու սպասարկվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների պահանջները՝ մշակում է հեռանկարային ծրագրեր,

4) ընտրում է իր ստեղծած ներկայացման շահագործման եղանակները՝ ներկայացումը ստեղծող հեղինակների և այլ անձանց (որոնց մտավոր սեփականությունն օգտագործված է ներկայացման մեջ) իրավունքների պահպանման պայմանով,

5) պայմանագրային հիմունքներով օգտագործում է մտավոր սեփականության օբյեկտները,

6) գովազդի նպատակով օգտագործում է սեփական ձևաթղթերը (պաշտոնական անվանումը և խորհրդանիշը), իր հավաքածուներում ու ֆոնդերում եղած գեղարվեստական մշակութային արժեքների պատկերները ու վերատպությունները, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով թույլատրվում է այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ օգտագործելու վերոհիշյալ նյութերը, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ,

7) անցկացնում է ստեղծագործական ստուգատեսներ, փառատոներ և մրցույթներ,

8) ստեղծագործական ներուժի վերարտադրման նպատակով կազմակերպված խմբակների միջոցով իրականացնում է երեխաների և պատանիների դերասանական հմտությունների ուսուցումը: Ուսման ավարտին սաներին շնորհվում է համապատասխան որակավորում և տրվում է համապատասխան վկայական,

9) սահմանում է տոմսերի, այլ ծառայությունների և արտադրանքի իրացման կարգը, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ,

15. Կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) սեփական ներկայացումների, ինչպես նաև այլ կազմակերպությունների պատվերով դեկորների, զգեստների և բեմի իրերի պատրաստում,

2) բեմական հարմարանքների, կառուցվածքների և մեխանիզմների, երաժշտային բեմասարքերի մշակում,

3) ստեղծագործական խմբերի և անհատ կատարողների հյուրախաղերի կազմակերպում,

4)սեփական ներկայացումների տոմսերի վաճառքից ստացված շահույթ, եթե համապատասխանում է համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեությանը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

16. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը և կազմակերպության գործադիր մարմինը՝ տնօրենը և գեղարվեստական ղեկավարը: Կազմակերպության գործադիր մարմինը Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող կազմակերպության:

17. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

18.Մեծամոր համայնքի ավագանու բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատում է կազմակերպության հիմնադրման, վերակազմավորման և լուծարման մասին որոշումը,

2) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և դրանում փոփոխությունների կատարումը,

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

19. Հիմնադրի լիազորություններն են՝

1) կազմակերպության հիմնադրումը,

2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նաև նրա կողմից իրականցվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

3) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,

4) հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և/կամ ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմը,

5) սահմանված կարգով նշանակում և ազատում է կազմակերպության գործադիր մարմնին՝ տնօրենին և գեղարվեստական ղեկավարին,

6) հիմնադիրը կարող է տնօրենի պարտականությունները և լիազորությունները դնել գեղարվեստական ղեկավարի վրա,

7) վերահսկողություն է իրականցնում կազմակերպության գործունեության նկատմամբ,

8) նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողովը և հաստատում լուծարման հաշվեկշիռը,

9) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

10) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները,

11) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

12) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս կազմակերպությանն ամրացված գույքի վարձակալության հանձնման համար,

13) հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը և դրույքաչափերը,

14) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

15) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ, ավագանու որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

20. Կազմակերպության տնօրենն իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է կազմակերպության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու, կամ ոչ պատշաճ կատարելու համար:

21. Կազմակերպության տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերն ու կնքում գործարքներ,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով՝ տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

5) բանկերում բացում է բանկային հաշիվներ,

6) ՀՀ օրենքներով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ ու վերահսկում դրանց կատարումը,

7) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ,

8) հաստատում է կազմակերպության աշխատանքային կարգապահական ներքին կանոնները,

9) ապահովում է աշխատանքային կարգապահության ներքին կանոնների, աշխատանքի պահպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը,

10) կազմում է կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և ներկայացնում հիմնադրի հաստատմանը,

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ,

12) չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և ընտրական հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից,

13) լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և պետությանը պատճառած վնասի համար:

22. Գեղարվեստական ղեկավարը՝

1) բեմադրում է նոր և վերականգնվող ներկայացումներ՝ հրապարակային ցուցադրման համար,

2) կատարում է նոր և վերականգնվող ներկայացումների դերաբաշխում,

3) նշանակում է ընթացիկ խաղացանկի ներկայացումներում ներմուծվող դերակատարներին,

4) հաստատում է ներկայացումների խաղացանկը, դեկորացիաների էսքիզներն ու մակետները, ինչպես նաև բեմադրական գործունեության այլ արդյունքները՝ տնօրենի համաձայնությամբ,

5) տնօրենի հետ համատեղ որոշում է հյուրախաղերի ժամկետները, խաղացանկը, հյուրախաղերի վայրերը և մասնակիցների կազմը,

6) առաջարկություն է ներկայացնում կազմակերպության տնօրենին՝ գեղարվեստական անձնակազմի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու, փոփոխելու և լուծելու վերաբերյալ,

7) առաջարկություն է ներկայացնում կազմակերպության տնօրենին՝ խաղացանկից հանվող ներկայացումների վերաբերյալ,

8) իրականացնում է գեղարվեստական ստեղծագործական գործունեության հետ կապված այլ գործառույթներ:

23. Ստեղծագործական անձնակազմը՝ բեմադրող ռեժիսորը, դերասանը, բեմադրող նկարիչը՝

1) աշխատանքի են ընդունվում օրենքով սահմանված կարգով, գեղարվեստական ղեկավարի ներկայացմամբ՝ տնօրենի հրամանով,

2) բեմադրիչ ռեժիսորը պատասխանատվություն է կրում հանձնարարված ներկայացման համար և օգտվում է ստեղծագործական ազատություններից,

3) դերասանն օգտվում է ստեղծագործական ազատությունից,

4) բեմադրող նկարիչն օգտվում է ստեղծագործական ազատությունից և պարտավորություն է կրում բեմադրվող և ցուցադրվող ներկայացումների նկարչական ձևավորման համար,

5) անձնակազմը պարտավոր է սահմանված աշխատանքային կարգապահական պահանջները կատարել ժամանակին, հետևել ժամանակակից թատերական աշխարհի զարգացումներին և հետևողականորեն զարգացնել սեփական մասնագիտական վարպետությունը:

24. Ստեղծագործական և կազմակերպական աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով տնօրենին առընթեր ստեղծվում է խորհրդակցական մարմին՝ գեղարվեստական խորհուրդ:

1) գեղարվեստական խորհուրդն իր գործառույթներն իրականացնում է տնօրենի կողմից հաստատված կանոնակարգի հիման վրա,

2) գեղարվեստական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են հիմնադրի

ներկայացուցիչը, կազմակերպության տնօրենը, գեղարվեստական ղեկավարը, ստեղծագործական անձնակազմի, ինչպես նաև արվեստի, գրականության, հասարակական և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ,

3) գեղարվեստական խորհրդի կազմը հաստատում է կազմակերպության տնօրենը՝ հիմնադրի հետ համաձայնեցնելով,

4) գեղարվեստական խորհուրդն իր լիազորությունների սահմաններում քննարկում է կազմակերպության ստեղծագործական գործունեությանն առնչվող հարցեր, քննարկում է կազմակերպության գործունեության տարեկան և ընթացիկ ծրագրերն ու դրանց կատարման հաշվետվությունները:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

25. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

26. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

27. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

28. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

29. Հիմնադիրը կարող է կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

30. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

31. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

32. Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեով նախատեսված միջոցների հաշվին, << օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

33. Կազմակերպության ֆինանսական միջոցների լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները,

2) բարեգործական, նպատակային ներդրումները, << և օտարերկրյա կազմակերպությունների և քաղաքացիների նվիրատվությունները, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կողմից մշակութային գործունեությանը տրամադրած դրամաշնորհները,

3) << օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

34. Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է հիմնադիրը:

35. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման) համայնքի ղեկավարի կողմից:

36. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

37. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

38. Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

39. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է հիմնադրի որոշմամբ:

40. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից մնացած գույքն ուղղվում է համայնքի բյուջե:

Աշխատակազմի քարտուղար Մ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2024 թվականի N 169-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ««ՀԱՅԱՍԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 2749-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Մեծամոր համայնքի ղեկավարի 2024 թվականի հոկտեմբերի 14-ի «Հայասատանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ջրամատակարարում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 2749-Ա որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱՉՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱՋԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

Համայնքի ղեկավար՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2024 թվականի N 170-Ա

«ՀԱՅԱՍԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ջրամատակարարում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշման 1-ին կետով հաստատված կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

Համայնքի ղեկավար՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ավագանու 2024 թվականի
հոկտեմբերի 18-ի N 170- Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.<<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ջրամատակարարում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի խորքային հորերի շահագործման, սպասարկման և բնակչությանը ոռոգման ջրով ապահովելու, ինչպես նաև համայնքի վարչական տարածքի կազմում ընդգրկված այնգյուղական բնակավայրերի խմելաջրի մատակարարման գործունեություն իրականացնելու նպատակով որոնք չեն սպասարկվում մատակարար կազմակերպության կողմից:

2. Կազմակերպության հիմնադիրը Մեծամոր համայնքն է (այսուհետ՝ Համայնք)՝ ի դեմս Մեծամոր համայնքի ավագանու (այսուհետ՝Հիմնադիր): Կազմակերպությունը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում ավագանու որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

3. Կազմակերպության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

4. Կազմակերպությունը օգտագործման իրավունքով ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր, կամ պատասխանող:

5. Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր, կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

6. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կլոր կնիք ու դրոշմակնիք, ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ:

7. Կազմակերպությունն ունի հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ բանկերում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

8. Կազմակերպությունն իր պարտականությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում կազմակերպության պարտավորությունների, իսկ կազմակերպությունը հիմնադրի պարտավորությունների համար:

Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև կազմակերպության պետական գրանցումը ծագած կազմակերպության գործունեության հետ կապված պարտավորությունների համար:

9. Կազմակերպության անվանումն է՝

- Հայերեն լրիվ՝
<<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ջրամատակարարում>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

կրճատ՝ << Մեծամոր համայնքի Ջրամատակարարում>> ՀՈԱԿ,

- ռուսերեն
լրիվ՝ <<Водоснабжение общины Мецамор Армавирской области Республики Армения>> общинная некомерческая организация

- կրճատ՝ <<Водоснабжение общины Мецамор >> ОНО

10. կազմակերպության գտնվելու վայրն
է՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, քաղաք Մեծամոր Վարչական կենտրոն 12.:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

11. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի տարածքում սպառողների համար ոռոգման ջրի բաշխումը և մատակարարումը, համայնքի վարչական տարածքի կազմում ընդգրկված գյուղական նակավայրերի սպառողների համար նաև խմելաջրի մատակարարումն, ինչպես նաև համայնքի ջրամատակարարման համակարգի վերանորոգումը, շահագործումը, պահպանումը ու վճարների գանձումն է:

12. Կազմակերպությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

13. Հիմնադրի կարգադրությամբ կազմակերպությունը կարող է իրականացնել նաև այլ լիազորություններ, լուծել օրենքին և իր կանոնադրությանը չհակասող այլ հարցեր ու խնդիրներ:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

14. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված ու ձեռք բերված գույքից:

Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում բարեգործական հովանավորչական, նպատակային նվիրատվություններն ու հատկացումները:

15. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

16. Կազմակերպության սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքը:

17. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

18. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

19. Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների արժանահատությունը ենթակա է վերստուգման (աուդիտի):

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

20. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացվում է ցանկացած գույք:

21. Հիմնադիրը իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանը ամրացված գույքը:

22. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը, կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

23. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:

24. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի, կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

25. Կազմակերպությունն իրավունք չունի օտարել, գրավ դնել, հանձնել վարձակալության իրեն ամրացված գույքը:

26. Հիմնադիրը իրավունք ունի ստուգելու կազմակերպությանը հանձնված նյութական արժեքների առկայությունը և ամբողջականությունը:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

27. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ կազմակերպության տնօրենը /այսուհետ՝ տնօրեն/:

28. Կազմակերպության ընդհանուր կառավարումն իրականցվում է հիմնադիրը:

29. Հիմնադիրը՝

1) ապահովում է կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրա չկատարման, կամ ոչ պատշաճ իրականացման համար.

2) օրենքով սահմանված կարգով պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է կազմակերպության տնօրենին.

3) հաստատում է կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը.

4) իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

5) կասեցնում է, կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

6) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրա գործունեության վերստուգման արդյունքները.

7) հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմը.

8) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

9) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանման նկատմամբ, իսկ օրենքով, կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս կազմակերպության գույքի օտարման, կամ վարձակալության հանձնման համար.

10) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը.

11) հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը և ֆինանսական արտադրական գործունեության ծրագիրը.

12) որոշում է ընդունում կազմակերպության ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ.

30. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է հիմնադրի ղեկավարը:

30. Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է պայմանագիր:

Պայմանագրով սահմանում են կազմակերպության տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման՝ Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը անհրաժեշտ կգտնեն:

Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

31. Կազմակերպության տնօրենը օրենքով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների իրավական այլ ակտերի, հիմնադրի, որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու, կամ ոչ պատշաճ կատարելու համար:

32. Կազմակերպության տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն, կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

33. Կազմակերպության տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպության և (կամ) համայնքին պատճառված վնասի համար:

Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու, պարտականությունները չկատարելու համար:

34. Կազմակերպության տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ:

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանած կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

6) սահմանում է կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

7) սահմանված կարգով հիմնադրին է ներկայացնում կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը.

8) հաստատում է ձեռնարկատիրական գործունեության եկամուտների և ծախսերի նախահաշիվը.

9) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

10) կազմակերպում է կազմակերպության անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գուրքի վերանորոգման և այլ աշխատանքներ.

11) ստորագրում է ֆինանսական փաստաթղթեր.

12) իրականացնում է ֆինանսական և արտադրական գործունեությանը վերաբերող այլ խնդիրներ.

13) հիմնադրի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության կառուցվածքը աշխատողների թիվը, հաստատում է կազմակերպության ընդհանուր և առանձին կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոններ.

14) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

35. Կազմակերպության տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները հրամանները հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

36. Կազմակերպության տնօրենի բացակայության դեպքում հիմնադրի գրավոր որոշման համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում է կազմակերպության այլ անձ:

37. Կազմակերպության աշխատողների իրավունքները ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ աշխատանքային պայմանագրով, կազմակերպության առանձին ստորաբաժանումների ու աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

38. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

39. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

40. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

41. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

42. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

43. Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը անցնում է հիմնադրին:

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2024 թվականի N 171-Ա

«ՄԵԾԱՄՈՐԻ ՎԵՐԵԼՔ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել «Մեծամորի Վերելք» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՅԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

Համայնքի ղեկավար՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ավագանու 2024 թվականի
հոկտեմբերի 18-ի N 171-Ա որոշման

«ՄԵԾԱՄՈՐԻ ՎԵՐԵԼՔ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 18
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ	Աշխատավարձի չափը
1	Տնօրեն	1.0	140000	140000	140000
2	ադմինիստրատոր	1.0	105000	105000	105000
3	հաշվապահ	1.0	105000	105000	105000
4	հնչյունային օպերատոր	1.0	110000	110000	110000
5	ձայնային օպերատոր	1.0	110000	110000	110000
6	դերձակ	1.0	105000	105000	105000
7	դեկորատոր	1.0	105000	105000	105000
8	հսկիչ	1.0	105000	155000	155000
9-16	դերասան	8.0	110000	880000	880000
17-18	հավաքարար	2.0	105000	210000	210000
Ընդամենը		**18.0**	**1100000**		**2025000**

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2024 թվականի N 172-Ա

«ՀԱՅԱՍԱՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ջրամատակարարում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

Համայնքի ղեկավար՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր
համայնքի ավագանու 2024 թվականի
հոկտեմբերի 18-ի N 172-Ա որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. **Աշխատակիցների թվաքանակը՝ 62**

2. **Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը**

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)	ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ	Աշխատավարձի չափը
1	Տնօրեն	1.0	350000	*0*	350000
2	Տնօրենի տեղակալ	1.0	290000	*0*	290000
3	Գլխ.Հաշվապահ	1.0	270000	*0*	270000
4	Գլխ.էներգետիկ	1.0	250000	*0*	250000
5	Ինժեներ-մեխանիկ	1.0	200000	*0*	200000
6	էլեկտրիկ հսկիչ	1.0	180000	*0*	180000
7	կադրերի տեսուչ	1.0	155000	*0*	155000
8	Հաշվետար	1.0	140000	*0*	140000
9-11	Փականագործ	3.0	180000	*0*	540000
12	Եռակցող	1.0	170000	*0*	170000
13	Հավաքարար	1,0	115000	*0*	115000
14-15	Բանվոր	2.0	150000	*0*	300000
16-42	նասոսավար	27.0	105000	*0*	2835000
43-62	հսկիչ-հավաքագրող	20.0	135000	*0*	2700000
Ընդամենը		62.0	***2690000***		***8495000***

Աշխատակազմի քարտուղար՝ **Մ. Հովհաննիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2024 թվականի N 173-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մեծամոր համայքի ավագանու 6-րդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի նոյեմբերի 15-ը՝ ժամը 16:00-ն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ԱՍԱՏՐՅԱՆ ԷԴԳԱՐ

ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԴՈԲՈՅԱՆ ՏԱՏՅԱՆԱ

ԵՐՎԱՆԴՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՋԱՔԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՄԱՑԱԿՅԱՆ ՏՈՆԻԿ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՆՈՒՆԵ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ

Համայնքի ղեկավար՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**